# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Ջանֆիդա բնակավայրի փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/50 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի օգոստոսի 01-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/50 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի հուլիսի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Համադրման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել նախատեսված աշխատանքների ծավալների և գնի նվազեցում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հուլիսի 10-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի 5.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 58,974,708.87 (հիսունութ միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր ութ դրամ ութսունյոթ լումա) ՀՀ դրամ, որից 9,829,118.15 (ինը միլիոն ութ հարյուր քսանինը հազար մեկ հարյուր տասնութ դրամ տասնհինգ լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:
2. Պայմանագրի Հավելված թիվ 1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակի «Գումար» սյունակում նշված «63,984,000.00» թիվը փոփոխվել է «58,974,708.87» թվով:
3. Պայմանագրի Հավելված 1.1-ով հաստատված «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ»-ի փոխարեն հաստատվել է Համաձայնագիր 3-ի Հավելված 1-ով ներկայացվող տարբերակը:
4. Պայմանագրի Հավելված 3-ով, Կողմերի միջև 2025 թվականի օգոստոսի 21-ին կնքված համաձայնագիր 1-ի Հավելված 2-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը փոփոխվել և հաստատվել է համաձայն՝ Համաձայնագիր 3-ի Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** Հիմք ընդունելով Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**